ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/145

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, յուղերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8856-2021 գրությամբ «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 27.05.2021թ.-ի թիվ Ե/40/1371-21 գրության հիման վրա, 02.06.2021թ.-ին «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 02.06.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 02.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/145 համարի ծածկագիրը:

02.06.2021թ.-ին և 25.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.06.2021թ.-ին:

2. **<u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 27.05.2021թ.-ի թիվ Ե/40/1371-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար՝ «Յուղեր» ձեռքբերելու նպատակով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.05.2021թ. N 3 արձանագրության (որոշման) համաձայն, թիվ 1 և 2 չափաբաժիններով նախատեսված «Յուղերի» մատակարարման նպատակով ընտրված մասնակից է ճանաչվել «Գայանե Նիկողոսյան» ԱՁ-ն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված 5 օրացուցային օրվա ընթացքում «Գայանե Նիկողոսյան» ԱՁ-ն ներկայացրել է գրություն, որով հրաժարվում է վերոնշյալ ապրանքների մատակարարումից:

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) և բ) պարբերությունների պահանջներով, Ձեզ ենք ներկայացնում վերը նշված գնման ընթացակարգի փաստաթղթերի պատճենները՝

1) Թիվ 3 արձանագրություն,

2) Հայտարարություն պայմանագիր կնքելու մասին,

3) «Գայանե Նիկողոսյան» ԱՁ-ի գրություն»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է "ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 02.06.2021թ.-ին գրությամբ դիմել է «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8856-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/145 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից յուղերի ձեռքբերման նպատակով 11.05.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ն:

iii. «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ն:

v. 21.05.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

vi. 25.05.2021թ.-ին «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ 2021 թվականի մայիսի 18-ին կայացած «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար յուղերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածագրով գնանշման հարցման ընթացակարգի «յուղ դիզելային» և «յուղ» չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Գայանե Նիկողոսյան» ԱՁ-ն: Հարվերի տեխնիկական բնութագրում չի նշվել վերոնշյալ չափաբաժինների ակցիզային հարկով հարկվելու մասին և «Գայանե Նիկողոսյան» ԱՁ-ն այն չի ներառել ապրանքի գնագոյացման հաշվարկում, ուստի ակցիզային հարկով հարկվելու խնդրի առաջացման պատճառով «Գայանե Նիկողոսյան» ԱՁ-ն չի կարող մատակարարել վերոնշյալ ապրանքատեսականին:

vii. Պատվիրատուն 26.05.2021թ.-ին գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, հրապարակել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածագրով գնանշման հարցման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարություն՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8856-2021 գրությամբ «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների

կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից յուղերի ձեռքբերման նպատակով 11.05.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.05.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից, ինչով պայմանավորված 21.05.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր: Սակայն 25.05.2021թ.-ին «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ 2021 թվականի մայիսի 18-ին կայացած «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար յուղերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածագրով գնանշման հարցման ընթացակարգի «յուղ դիզելային» և «յուղ» չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Գայանե Նիկողոսյան» ԱՁ-ն: Հարվերի տեխնիկական բնութագրում չի նշվել վերոնշյալ չափաբաժինների ակցիզային հարկով հարկվելու մասին և «Գայանե Նիկողոսյան» ԱՁ-ն այն չի ներառել ապրանքի գնագոյացման հաշվարկում, ուստի ակցիզային հարկով հարկվելու խնդրի առաջացման պատճառով «Գայանե Նիկողոսյան» ԱՁ-ն չի կարող մատակարարել վերոնշյալ ապրանքատեսականին: Պատվիրատուն 26.05.2021թ.-ին գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, հրապարակել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածագրով գնանշման հարցման ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարություն՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-98/21» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի

ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.06.2021թ.-ի թիվ 26/26-1/8856-2021 գրությամբ «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/145 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գայանե Նիկողոսյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**